



ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՐՄԱԿԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Ն. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Իրանական կենդանի լեզուների կառուցվածքի ձևաբանության և շարահյուսության գիտական ուսումնասիրության սկիզբը դրվել է XIX դարի կեսերին: Եվրոպայում այդ հարցով զբաղվել են շատ ավելի վաղ, բայց պարսկերենի, իսկ վերջերս՝ նաև իրանական մյուս լեզուների ուսումնասիրության առաջավոր և պատվավոր դերը պատկանում է ռուս գիտնականներին (Ա. Բուլդերև, Ֆ. Կորշ, Ա. Ռամասկովիչ, Բ. Միլլեր և այլք): Ռուսաստանում ստեղծված առաջին քերականական գործերից են Աբաս Կուլի Բակիխանովի (Краткая грамматика персидского языка, 1841), Ի. Ն. Բերյոզինի (Грамматика персидского языка, 1853), Կ. Ջալեմանի և Վ. Ժուկովսկու (Краткая грамматика персидского языка, 1898), Միրզա Ջաֆարի (Грамматика персидского языка, 1901), Ե. Բերտելսի (Грамматика персидского языка, 1922), Գոտտոմորի (Персидская грамматика, 1904) և այլոց գործերը:

Այս աշխատությունները մեծ դեր են խաղացել պարսկերեն լեզվի և քերականության ուսումնասիրության գործում: Բայց վերոհիշյալ ուսումնասիրությունների մեծ մասը բնորոշվում է նեղ պրակտիցիզմով (Ա. Բակիխանով, Միրզա Ջաֆար, Գոտտոմոր): Ոմանց մոտ նկատելի է նաև պարսկերենի քերականական իրողությունների վերլուծումը արաբերենի նմանողությամբ: Օրինակ, Ա. Բակիխանովը ուղեցույց ունենալով արաբերեն քերականության կանոնների էությունը, գոյություն ունեցող տեսակետները, դրանք նույնությամբ տարածել է պարսկերեն քերականության վրա: Օրինակ՝ ըստ արաբերեն ընդունված կարգի պարսկերենի խոսքի մասերը բաժանելով երեք խմբի՝ esm, փ'el, hārd, դրանցից յուրաքանչյուրն էլ իր հերթին մասնատում է ըստ մասնիկների: Բայի ժամանակների կազմությունը քննելիս Բակիխանովը նկատի ունի ոչ թե բայի երկու՝ ներկայի և անցյալի հիմքերը, որոնք ընկած են պարսկերենի բայի ժամանակների կազմության հիմքում, նկատի ունի ոչ միայն բայի փոփոխությունն ըստ ժամանակի, եղանակի, դեմքի և թվի, որը բնորոշ է պարսկերենի բային, այլ առաջնորդվում է արաբերենով: Այդ պատճառով բայի ժամանակների մի մասը՝ մասնիկներ շունեցող ժամանակները՝ ընկել են երկրորդ փ'el բաժնի մեջ: Մյուս մասը՝ մասնիկներ ստացող ժամանակները՝ վերջին hārd բաժնի մեջ: Հեղինակը ոչ միայն լրիվ պատկերացում չի տալիս պարսկերեն բայի ժամանակների, նրա խոնարհման բնույթի, զույություն ունեցող եղանակների մասին, այլև նրանց կազմության մասին ընդհանրապես:

Որոշ հեղինակներ, հիմնականում նկատի ունենալով իրանական կլասիկ լեզուն, արձանագրել են առանձին լեզվական փաստեր, առանց տարբերակելու ոչ կենսական գործածություն ունեցող ձևերը կենսական գործածություն ունեցող օրինաչափ հանդիսացող ձևերից: Օրինակ՝ Կ. Ջալեմանը և Վ. Ժուկովսկին գրում են, որ վաղակատար ժամանակն ունի նաև iāft āst ձևը, կամ mi-ն դրվելով անցյալ կատարյալի վրա՝ նրան տալիս է ըզձական, երբմին էլ անցյալ անկատարի և պայմանականի իմաստ (iāftāmi): Մինչդեռ դրանք լեզվում մնացած հին ձևեր են, որոնք վաղ շրջանի գրողների մոտ հանդես են գալիս իրենց նոր ձևերի հետ միասին, բայց լեզվում այլևս չունեն կենսական գործածություն: iāft āst ձևին հանդիպում ենք Ֆիրդուսու մոտ. այն հանդես է գալիս վաղակատար ժամանակի ձևի հետ:

Երկրորդը՝ iāftāmi պահլավերենի ըզձական եղանակի անցյալ ժամանակի առաջին դեմքի վերջավորությունն է kārđ, kārđāmi (անեի), որը նոր պարսկերենում ըզձականի նոր ձևի կազմության հետևանքով աստիճանաբար կորցնելով իր իմաստը, հանդես է եկել սահմանական

եղանակի անցյալ անկատարի նշանակութամբ (անում էի): Արդի պարսկերենում այս երկու նշանակությունն էլ դուրս են եկել գործածությունից:

Ժամանակակից լեզվի ոչ բավարար պատմական հիմնավորման արդյունք է նաև հազվագյուտ արխայիկ ձևերը ժամանակակից լեզվին բնորոշ համարելու փաստը:

Ծ. Բերտեյան իր «Грамматика персидского языка» շախատության մեջ (1922, Լենինգրադ), հենվելով ըզձական եղանակի միայն մեկ բայի արխայիկ կազմության bad ձևի վրա, այն արհեստականորեն տարածում է բոլոր բայերի վրա: Ըստ Ծ. Բերտեյանի ստացվում է, որ պարսկերենն ունի երկու առանձին եղանակներ՝ ստորադասական berāvām berāvi berāvād և ըզձական, իսկ վերջինս ունի միայն բերորդ դեմք (košad):

Հիմնվելով միայն կլասիկ լեզվի վրա, մի շարք հեղինակներ, ժամանակակից լեզվի շատ ձևեր թողել են ուշադրությունից դուրս: Այդ պատճառով, պարսկերենի ըզձականի բայաձևը նրանց կողմից դիտվել է՝ որպես ա) սահմանական եղանակի ներկա, իսկ be մասնիկով այն դառնում է ստորադասական եղանակ (Ծ. Բերտեյան): բ) Աորիստ (mezar), որը be մասնիկով դառնում է սահմանական եղանակի անորոշ ապանի (Ի. Բերյոզին): գ) Անորոշ ներկա (Գոռուտոմոր): դ) Սահմանական եղանակի ներկա և ստորադասական, որը կարող է ստանալ նաև he մասնիկը (Կ. Զայեման և Վ. Ժուկովսկի): ե) ներկա ապանի (Վ. Ռաստորգուևա): զ) Հատուկ ձև (Ա. Կասակ) և այլն:

Նման ուսումնասիրության արդյունք է նաև այդ հեղինակների կարծիքը արդի պարսկերենում ըզձական եղանակի անցյալ ժամանակի մասին, ինչպես նաև որոշ հեղինակների կողմից պայմանական և հարկադրական եղանակների ժխտումը, ըզձական բայաձևի մեջ երկու իմաստների՝ ըզձականի և պայմանականի ընդունումը և, վերջապես, հեղինակների տարակարծությունը ինչպես պարսկերենի եղանակների թվի, այնպես էլ նրանց վերագրվող ժամանակների մասին:

Ուսումնասիրողների տեսակետները եղանակների մասին չեն համընկնում: Տարբեր հեղինակներ ընդունում են տարբեր քանակի եղանակներ: Միասնական կարծիք չկա նաև այդ եղանակներից յուրաքանչյուրին վերագրվող ժամանակների մասին: Այսպես, Ա. Բակիխանովը պարսկերենում տարբերում է երկու եղանակ՝ ըզձական և հրամայական. Ի. Բերյոզինը՝ վեց. սահմանական, ստորադասական, ըզձական, անորոշ, պայմանական և հրամայական: Միրզա Զաֆարը՝ երեք. սահմանական, անորոշ, հրամայական: Ընդ որում, Միրզա Զաֆարը ստորադասական և պայմանական եղանակները միավորում է: Այդ պատճառով, նրա մոտ այդ ձևը հանդես է գալիս ոչ որպես եղանակ, որն ունի արտահայտման առանձին ձև, բովանդակություն և ժամանակ, այլ որպես սահմանական եղանակի ներկա, առանց mi-ի: Խոսելով վերջինիս կազմության մասին, նա գրում է. «Այս ժամանակը ունի նաև ստորադասական նշանակություն», իսկ անցյալ անկատարի առիթով նշում է. «Այս ձևը գործածվում է նաև ստորադասականի նշանակությամբ»: Գոռուտոմորն ընդունում է չորս եղանակ. սահմանական, հրամայական, ստորադասական և պայմանական: Ծ. Բերտեյան իր «Грамматика персидского языка» (1922) շախատության մեջ ընդունում է չորս եղանակ. անորոշ, սահմանական, հրամայական, ըզձական (ըստ որում՝ ըզձական եղանակը նրա մոտ ունի միայն բերորդ դեմք), իսկ մեկ այլ գրքում՝ «Учебник персидского языка» (1932), նա ընդունում է հինգ եղանակ՝ սահմանական, ստորադասական, ըզձական, հրամայական, անորոշ: Ա. Կասակը ընդունում է երկուսը. սահմանական և հրամայական: Ըզձական բայաձևը նա ընդունում է իբրև հատուկ ձև: Վ. Ռաստորգուևան «Персидско-русский словарь»-ին կցված «Краткий очерк грамматики персидского языка» հատվածում (1950) նշում է չորս եղանակ. սահմանական, ստորադասական, ըզձական, հրամայական, իսկ երեք տարի անց, նույն գրքի վերահրատարակության մեջ մատենանշում է երեք եղանակ. սահմանական, ստորադասական և հրամայական, որն ընդունում է նաև Ի. Օվչիննիկովան և Յու. Ռուբենիկը²: Պարսիկ քերականագետներ Մոհամեդ Զավադ Մաշքուտը և Աբդուլ Ազիզ Դարիբը ընդունում են վեց եղանակ. սահմանական, պայմանական, հրամայական, նկարագրական, անորոշ և ըզձական³:

Հեղինակները տարակարծիք են ոչ միայն պարսկերենում գոյություն ունեցող եղանակների թվի վերաբերյալ: Ոմանք չեն պարզում, թե եղանակի կատեգորիան քերականական ի՞նչ իմաստ ունի և ի՞նչ հատկանիշներով է բնութագրվում:

1 А. Касаев, Учебник персидского языка. Ленинград, 1945, ч. I, 1946, ч. II.

2 И. К. Овчинникова, Учебник персидского языка. Ч. I, Москва, 1946; Ю. Рубенчик, Грамматический очерк персидского языка. В «Персидско-русском словаре». М., 1970.

3 Նույն կարծիքի են նաև Զավադ Մահմուդ Ռեզադադին, Խայամիտը, Յասամի Ռաշեդը և ուրիշներ:

Ի. Բերյոզինը պարսկերենի բայաձևերն ըստ եղանակների խմբավորում է այսպես.

Սահմանական եղանակ xorām, mixorām, xordām, mixordām, xordeam, xorde budām, xahamxord, xorde bašām, bexorām

Ըղծական եղանակ aya համ kaš bexorām, aya կամ kaš mixordām

Ստորադասական եղանակ ta կամ ke bexorām, ta կամ ke xorde bašām

Պայմանական եղանակ āqr miporsidam, āqr porside bašām bexorām, xorde bašām ձևերը սահմանական եղանակի տակ դնելը տրամաբանական հիմք չունի: Նրա ստորադասական և ըղծական եղանակների ապառնի ժամանակներն ունեն շարահյուսական արտահայտություն:

Քերականների մի խումբ (Ի. Բերյոզին, Ա. Բակիրյանով, Գոուտոմոր, Հ. Տուզյան և այլք) bexorā m, xorde bašām ձևերը դնելով հրամայական կամ սահմանական եղանակի տակ, նկատի են ունեցել այս ձևի միայն ապառնի ժամանակ արտահայտելու իմաստը, մի կողմ թողնելով այս բայաձևերի յուրատեսակ բովանդակությունը:

berāvām, xahām rāpt երկու բայաձևերն էլ արտահայտում են գործողություն, որը պետք է կատարվի խոսքի ավարտից հետո: Բայց այդ բայաձևերի արտահայտած գործողություններն իմաստները բոլորովին տարբեր են:

ba'd āz se ruз be Moskou xahād rāpt (Երեք օրից Մոսկվա է գնալու). արտահայտում է ստույգ գործողություն:

b'ad āz se ruз mixahām be Moskou berāvām (Երեք օրից ուզում եմ Մոսկվա գնալ): Այստեղ rāptān (գնալ) բայաձևն արտահայտում է ցանկություն, որը կարող է շիրականանալ: Ստորադասական և ըղծական եղանակների ապառնի ժամանակներն ունեն միայն շարահյուսական արտահայտություն:

Հաճախ միևնույն ձևը մի հեղինակի մոտ դիտվել է որպես եղանակ, իսկ մյուսի մոտ՝ ժամանակ: Ինչպես վերը նշեցինք, ըղծական եղանակի բայաձևը տարբեր քերականների կողմից տարբեր անվանումներ է ստացել. ստորադասական, աորիստ, պայմանական, հատուկ ձև: Ումանց կողմից դիտվել է նաև որպես ժամանակ (Ի. Բերյոզին, Հ. Տուզյան), իսկ մեկ այլ խմբի կողմից՝ առանձին եղանակ (Միրզա Զաֆար, Վ. Ռաստորգուևա, Ի. Օվչինիկովա, Յու. Ռուբենշիկ) կամ հատուկ ձև, որը չի մտնում ոչ եղանակների և ոչ էլ ժամանակների թվի մեջ (Ա. Կասակ⁴): Ումանք աորիստը դիտել են և՛ որպես ժամանակ, և՛ որպես եղանակ (Կ. Զալեման և Վ. Ժուկովսկի, Ա. Բիլովա): Վաղ շրջանի քերականները (Ի. Բերյոզին, Հ. Տուզյան) պարսկերենում տարբերելով երկու առանձին եղանակներ (ստորադասական և ըղծական), ստորադասականի առաջ դնում են ta կամ ke շաղկապները, իսկ ըղծականի առաջ kaš կամ ey, kaš բառը, քանի որ երկու եղանակներն էլ արտահայտվում են նույն բայաձևի միջոցով: Հետագայում, վերոհիշյալ շաղկապները որպես ստորադասական և ըղծական եղանակների արտահայտման անհրաժեշտ տարրեր, շրջանվեցին քերականների կողմից: Ինքնըստինքյան ժխտվեց նաև երկու եղանակների գոյություն փաստը, քանի որ միայն այդ շաղկապների միջոցով են այդ երկու եղանակներն իրարից տարբերվում: Հետագայում շրջանվեց նաև երկու առանձին ստորադասական և ըղծական եղանակների գոյությունը լեզվում, բայց որոշ քերականներ (Կ. Զալեման և Վ. Ժուկովսկի, Ե. Բերտելս, Վ. Ռաստորգուևա) գտնում են, որ պարսկերենում կա ստորադասական եղանակ և ըղծական եղանակի երրորդ դեմքը միայն, քանի որ ըղծական եղանակի կազմության ձևը վերացել է և այն պահպանվել է միայն երրորդ դեմքում: Վերոհիշյալ հեղինակները խոնարհման տախտակում ըղծական եղանակի տակ դնում են միայն երրորդ դեմքը:

Ե. Բերտելսը գրում է. «Ըղծական եղանակը ժամանակակից գրական լեզվում գրեթե չի հանդիպում, գործածվում է համարյա բացառապես միայն եզակի երրորդ դեմքում, որը կազմվում է ներկայի դիմային վերջավորության և հիմքի միջև արեֆի ավելացումով, այսինքն կարձձ-ն դառնալով երկար a⁵»:

Պարսկական կլասիկ գրական լեզվում հազվադեպ հանդիպող հին ըղծական ձևի և արդի լեզվում միայն մեկ ձևի bad-ի հիման վրա, Ե. Բերտելսը վերականգնում է այդ կազմությունը արդի բոլոր բայերի երրորդ դեմքի համար, իսկ Ս. Բաևակին, ընդունելով այն փաստը, որ արդի պարսկերենում աորիստի ձևը կատարում է ըղծական եղանակի ֆունկցիան, այն որպես առանձին եղանակ չի ընդունում, պատճառաբանելով, թե հնում այն ունեցել է իր արտահայտ-

⁴ А. Касаев, Учебник персидского языка. Ленинград, ч. I, 1945, ч. II, 1946.

⁵ Е. Бертельс, Грамматика персидского языка. Ленинград, 1922, с. 33.

ման հատուկ ձևը՝ վերջավորութունից առաջ ակֆի երկարացումով: Քանի որ արդի լեզվում այդ կազմութունը այլևս չկա, ապա հեղինակի կողմից այն որպես առանձին ըղձական եղանակ չի ընդունվում⁶:

Հին պարսկերենում բայի այս երկու եղանակները միմյանցից տարբերվում էին միայն կազմությամբ: Ստորադասական եղանակի դեպքում ակֆը դրվում է դիմորոշ վերջավորութունից առաջ: Օրինակ՝ bavatiy, bav+ a + tiy (լինի): Ըղձականի դեպքում՝ վերջավորութունից հետո. biya (լինի): Այս եղանակներն իրենց արտահայտած իմաստներով խիստ մոտ են և հենց այդ է պատճառը, որ լեզվի հետագա շրջանը՝ պահլավերենը, հին պարսկերենի այդ երկու (ստորադասական և ըղձական) եղանակների դիմաց ունի մեկ՝ ըղձական եղանակ: Այս երևույթը հատուկ է ոչ միայն պարսկերենին, այլև հնդեվրոպական մի շարք լեզուների, ինչպես նաև՝ հայերենին: Մ. Աբեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ գրում է. «Հին հնդեվրոպական լեզուների ըղձական և ստորադասական կիրառության ոլորտները շոշափում են իրար: Այս շոշափումը, ինչպես գրում է Բրուգմանը, բնականաբար այն հետևանքը պիտի ունենար, որ լեզուների զարգացման ընթացքում ըղձական և ստորադասական եղանակները պետք է խառնվեին իրար, ինչպես իրոք եղել է մի քանի հնդեվրոպական լեզուների մեջ, որոնք թվում՝ հայերենում» (էջ 332): Փաստորեն, ստորադասական եղանակը պահլավերենի ըղձական եղանակի օրինաչափ փոփոխված ձևն է, իսկ bad մեր կարծիքով, ոչ թե ըղձականի, այլ ստորադասականի հին կազմության քայքայած ձևն է, որը մինչև այսօր պահպանվում է լեզվում: Հին պարսկերենում, ինչպես արդեն նշեցինք, budān բայի ստորադասական ձևը եղել է bavatiy: bavatiy վերջին iy-ն ընկնելով, պահլավերենում դարձել է bavāt, րանի որ հին պարսկերենի վերջին ձայնավորները նոր պարսկերենում, որպես օրենք, ընկնում են: Պահլավերենի t-ն նոր պարսկերենում (բացառությամբ այն դեպքերի, երբ նրան նախորդում է թույլ բաղաձայն) դառնում է d, bvād: bvād-ի v-ն սղվելով դարձել է bad: Այս միակ ձևն է, որ մինչև օրս անփոփոխ պահպանվում է և, այն էլ միայն այս բայում: bad-ը նոր լեզվում որպես ըղձական եղանակի կազմության ձև չի ըմբռնվում, այլ ունի սուսկ ցանկություն, իղձ ցույց տվող բառի նշանակություն: Արդի լեզվում այն գործածվում է միայն գրականության մեջ:

Օրինակ. nuš bašād (անուշ լինի) սովորական գործածության դեպքում և omr u dovišt šahjhan deraz bad երկար լինի աշխարհի թագավորի կյանքն ու իշխանությունը՝ իշխանավորին դիմելու դեպքում: Որ իրոք bad-ը որպես budān բայի ըղձական եղանակի երրորդ դիմք չի ըմբռնվել, այլ հանդես է եկել որպես սուսկ իղձ, փափագ ցույց տվող բառ, վկայում են Ֆիրդուսու մոտ այս բառի երկրորդ դիմքով գործածված դրական և բացասական ձևերը: badi, m ābadi pašman mābadi z kārdar-e xviš be to bad rosān del o din i qit (Զիոշմանես քո արածից: Ունենաս (բառացի՝ քեզ լինի) պարզ սիրտ, կրոն ու աշխարհ): Ke javād badi to ey pāhlāvan (Šahname, ֆերձուսի) (Որպեսզի հավիտյան լինես, ո՛վ քաջ):

Մեծնող հին կազմության այս ձևը վերականգնել և ընդհանրացնել նոր լեզվի բոլոր բայերի համար՝ ճիշտ չէ, քանի որ լեզվում ըղձական եղանակի կազմության այդ հին ձևը ոչ մի դիմքի համար գոյություն չունի: Իսկ հին կազմության ձևի վերացման հետևանքով ժխտել նաև ըղձական եղանակի գոյությունը, նշանակում է ժխտել այն հանրահայտ փաստը, ըստ որի, լեզվական ձևի և բովանդակության կապը պատմականորեն առաջացած կապ է:

Յուրաքանչյուր առանձին եղանակի գոյությունը պայմանավորված է եղանակի քերականական հասկացությունը դրսևորող համապատասխան բառահարաբերական ձևերի գոյությամբ: Բայց այդ ձևը կարող է տարբեր լինել ոչ միայն տարբեր լեզուներում, այլև նույն լեզվի տարբեր շրջաններում, որովհետև եղանակի գոյությունը լեզուներում հիմնված է ոչ թե լոկ ձևի, այլ բայի գործողության իրականության հետ ունեցած տարբեր հարաբերությունների վրա: Ըստ դրա առաջանում են գործողության տարբեր եղանակներ:

Ումանք beravān բայաձևով արտահայտվող եղանակը անվանում են ստորադասական եղանակ (Ի. Օվլիննիկովա, Վ. Ռաստորգոևա, Ա. Բիլովա), այն պատճառաբանությամբ, թե այն հանդես է գալիս գլխավորապես երկրորդական նախադասություններում: «Փամանակակից պարսկերեն լեզվում արդիստը գլխավոր նախադասություններում ինքնուրույն չի գործածվում և հանդիպում է միայն երկրորդական նախադասություններում», — գրում է Ա. Բիլովան⁷: Նման

⁶ С. Баевский, Модельные значения глагольных форм современного персидского языка. Ленинград, 1954 (Диссертация).

⁷ А. В. Билова, О семантике временных форм персидского языка. М., 1945, с. 121 (кандидатская диссертация).

կարծիքի հետ համաձայնել չենք կարող, քանի որ այդ եղանակի բայաձևը՝ (beravā m)՝ հավասարապես կարող է հանդես գալ թե գլխավոր, և թե երկրորդական նախադասություններում: Ուստի այդ բայաձևը պարսկերենում կարող է կազմել և գլխավոր նախադասություն, և երկրորդական: Այսպես, օրինակ.

Zesti-e pedārāšra hes nākonād v taḫeš-e del-e por mohābāt-e-urajāvab quyād (bozorg Alavi) (Հոր տգեղությունը շղթա և նրա սիրով լի թիրտացող սրտին պատասխան տա). xanom sar šoma salamāt bašad v xoda bace haetanra be soma bebaxsad (Sadeqe He-dayāt) (Տիկին, ձեր գլուխը ողջ լինի, աստված ձեր երեսներին ձեզ բարխշի). Xoda mārqām bedāhād (Աստված ինձ մահ տա). māxāḫfi nāmanād (Ծածուկ շմա) և այլն):

Այն պատճառաբանությունը, թե այդ բայաձևը համեմատաբար շատ ավելի հանդես է գալիս երկրորդական, քան գլխավոր նախադասություններում, մեր կարծիքով, եղանակի բնորոշման փաստ լինել չի կարող: Պարսկերենում այդ բայաձևը հիմնականում արտահայտում է խոսողի ցանկությունը, իղճը, փափագը, հորդորը մի բան անելու վերաբերյալ, անկախ նրանից, թե նա գլխավոր նախադասության կազմում է, թե երկրորդական:

Մինչ այժմ, որպես ըղձական եղանակի անցյալ ժամանակ ընդունված է անցյալ դերբայով և budān (լինել) բայի ներկայի հիմքով կազմված ձևը rāḫte bašām, goḫte bašām.

Հավազույն ապացույցն, որ այդ ձևը ժամանակակից պարսկերենում ըղձական անցյալ չի արտահայտում հենց այդ քերականների կողմից տրված տարբեր անվանումները և նրանց արտահայտած իմաստի մասին եղած տարբեր կարծիքներն են: rāḫte bašām ձևը տարբեր հեղինակների կողմից ստացել է տարբեր անվանումներ և դրվել է տարբեր եղանակների տակ:

Օրինակ, Ի. Բերդոզիբը այն անվանում է «շավարտված ապառնի» և դնում է սահմանական եղանակի տակ: Կ. Զալեմանը և Վ. Ժուկովսկին այն անվանում են Futurum, ezechim կամ conditionalis Ե. Բերտեյը այն անվանում է Futurum exactum երկրորդ ապառնի կամ պատճառական ապառնի: Միրզա Ջաֆարը գտնում է, որ այդ ձևն արտահայտում է այն, ինչ վաղակատարը, բայց ենթադրության ձևով: Նույն կարծիքին է նաև Լ. Ժիրկովը⁸: Ա. Ազերին այն համարում է ենթադրություն՝ ացյալում և ապառնիում⁹, իսկ Յու. Մառը՝ ստորադասական անցյալ¹⁰: Ա. Կասաբը համարում է ենթադրական ձև, որն ընդգծում է գործողության հնարավոր հետևանքը ապագայում և չի դնում ոչ մի եղանակի տակ: Տարատեսակ կարծիքներ են հայտնել նաև Ս. Բակակին (մի դեպքում՝ հատուկ ձև, մեկ այլ դեպքում՝ ստորադասականի անցյալ), Վ. Ռաստրգուևան (ստորադասական եղանակի անցյալ ժամանակ), Ա. Բիրովան (ստորադասական եղանակի անցյալի ենթադրական ձև), Ա. Վահրամյանը (ստորադասականի վաղակատար¹¹): Ընդ որում, Ա. Բիրովան թեև այս ձևը դնում է ստորադասական եղանակի տակ որպես անցյալ ժամանակ, միաժամանակ, քննադատում է այն քերականներին, որոնք այն համարում են միայն ստորադասական եղանակի անցյալ, շեշտելով, որ «այդ դեպքում նա չի կարողանա ընդգծել այդ կերպի տարբերությունները, որ նա արտահայտում է ընդհանրապես: Եվ այդ ձևը միշտ չէ, որ արտահայտում է անցյալի գործողություն: Այն կարող է արտահայտել նաև ապառնի և վաղակատար ժամանակների իմաստ, երկու դեպքում էլ՝ հետևանքի նշանակությամբ»¹²: Հեղինակը բավարարվում է միայն վերոհիշյալ արտահայտությամբ, առանց խորանալու հարցի մեջ:

Այս տարակարծությունները բխում են երկու պատճառներից.

1. Արդի պարսկերենում եղանակների դրսևորման մասին ունեցած ոչ ճիշտ պատկերացումներից:

Պարսկերեն լեզուն ունի եղանակ դրսևորելու երկու միջոց. բայաձև և բայաձևի վրա դրվող տարբեր եղանակավորող բառեր: Ըղձականի անցյալը պարսկերենում կազմվում է անցյալ անկատարից և kaš, ey kaš օժանդակ բառով kaš mir āḫtām: Վերջինս միշտ շփոթել են եղանակային իմաստ արտահայտող այլ շարահյուսական ձևերի հետ և որպես եղանակավորող բառ չի առանձնացվել, ինչպես և āḫāf, baḫā: բառերը: Kaš ey kaš բառերը անցյալ անկատար

⁸ И. И. Жирков, Персидский язык. Элементарная грамматика. М., 1927.

⁹ А. И. Азери, Учебник персидского языка. Баку, 1949.

¹⁰ Я. Н. Мара, Лекции по персидскому языку. В сб. «Статьи и сообщения», II, М.-Л., 1939.

¹¹ A. Wahramund, Praktische grammatik der neue persischen sprache. Berlin, 1875.

¹² Ա. Բիրովան, Նշվ, աշխ., էջ 236:

ժամանակի վրա ունեն ոչ թե շարահյուսական նշանակություն, այլ՝ եղանակային: Այն դրվել է անցյալ անկատարի վրա ոչ թե այդ ձևի իմաստը ավելի ցայտուն դարձնելու համար, ինչպես արվում է մյուս դեպքում. kaš berāvām Երանի գնամ—Այտեղ, առանց այդ Kaš բառի էլ beravām բայաձևը ունի փափագ, ցանկություն դրսևորելու նշանակություն: Այդ բառն այտեղ ավելի շեշտեց վերոհիշյալ իմաստը: Այլ է, երբ այն դրվում է անցյալ անկատարի վրա: Այս դեպքում նա բայաձևին տալիս է բոլորովին այլ եղանակի նշանակություն: Օրինակ. mīrāfītām գնում էի: Այս բայաձևը սահմանական եղանակի անցյալ անկատարի հաստատ գործողություն է արտահայտում, բայց kaš mīrāfītām ձևում եղանակը միանգամայն փոխվում է: Այս ձևը, անկախ նրանից թե ինքուրի մեջ է կամ առանձին՝ ունի ըղձական եղանակի նշանակություն: ey kaš širin āqāllān āz zāban-e u nemi šenid (Ա՛հ, երանի Շիրինը գոնե նրանից չսեբ): Kaš in karra nemikārdām v ya āqāllān kur sode budām (Երանի այդ բանը շանեի, կամ գոնե կույր լինեի): Ըղձական եղանակի անցյալի արտահայտման այս ձևի մասին ժամանակակից հեղինակներից առաջինը հիշատակել է Ա. Բիլովան: Նա գրում է. «Բացի անցյալի ենթադրականից Kārde bašām, անցյալ անկատար ժամանակը կարող է գործածել նաև kaš, ey kaš բառերի հետ, որպես ըղձական եղանակի անցյալ, հատկապես՝ անիրականանալի իդձ արտահայտելու համար»:

Պարսկերենում երկու առանձին եղանակների (ստորադասական և ըղձական) տարբերակում հնարավորություն չի տալիս հեղինակին այդ ժամանակների մասին ճիշտ եզրակացություն հանգելու: Անցյալ անկատարը kaš բառի հետ նա դիտում է որպես ըղձականի անցյալ, իսկ kārde bašām որպես ստորադասական եղանակի անցյալ:

2. Ժամանակի և ժամանակակետի միջև զանազանություն չդնելը: kārde bašām բայաձևը պարսկերենում հիմնականում արտահայտում է ոչ թե սոսկ անցյալ ժամանակը, այլև անցյալ ժամանակակետի նկատմամբ գործողության ավարտված լինելու վերաբերյալ խոսողի շիրականացած ցանկությունը:

kārde bašām ձևը կարող է արտահայտել նաև խոսողի ենթադրությունը, կասկածը պարզա գործողության նկատմամբ և հատկապես՝ առակայի վիճակը: Ուստի այս ժամանակը պարսկերենում պետք է կոչվի ոչ թե ըղձական եղանակի անցյալ ժամանակ, այլ ըղձական եղանակի վաղակատար կամ հարակատար:

Այս բայաձևը պարսկերենում արտահայտում է.

ա) խոսողի շիրականացած ցանկությունը անցյալ ժամանակակետում սկսված և ավարտված գործողության վերաբերյալ:

yek donya keyf mibārām dorost mesl-e in as ke ba hāman fiale yek kāf sārāb nušide bašām (Jāmal Zade)(Աշխարհի շափ ուրախանում եմ, ճիշտ կարծես թե հենց նույն բաժակով գինի խմած լինեմ):

բ) խոսողի ենթադրությունը կամ կասկածը անցյալում կատարված, վերջացած գործողության նկատմամբ:

māitaleb-e nameha če āsāri mitāvanest dār fēkr o omr-e xod-e u dašte bašād..., ne, ne nameha nemitāvanest dār xod-e u āsāri dašte bašād (Bozorg Alavi) (Նամակների բովանդակությունը նրա մտքի և կյանքի վրա ինչ ազդեցություն կարող են ունեցած լինել: Ոչ, ոչ, նամակները չէին կարող նրա վրա ազդեցություն ունեցած լինել):

գ) ենթադրություն, կասկած պարզապես կատարվելիք գործողության նկատմամբ:

In kar sāxsi mitāvanad bexubi be ānjam beresanād ke čāndin sal dār an kar kārde bašād (Dašti)(Այս գործը միայն նա կարող է կատարել, ով որ մի քանի տարի աշխատած լինի):

դ) Առարկայի վիճակը:

.. Dovom čāsmha-e u bud ke dār an yek nou' atās zābane mikašid, čāsmha-e qāšāng dār mian-e zānha-e Iran xeyli fārvan āst āmma in čāsmha-e ziba qalebān āz hes o hāyat arist ensan āz an čizi nemi fāhmād mesl-e inke sāxs dār moqabel-e ketāb-e nāfisi u por fālsāfē-e čin qārar gerefte bašād (Dašti) (Երկրորդը նրա աչքերն էին, որոնց մեջ մի տեսակ կրակ էր բոցկտում, գեղեցիկ աչքեր իրանի կանանց մոտ շատ են, բայց այդ գեղեցիկ աչքերը հաճախ կենդանությունից և զգացմունքից զուրկ են, մարդ նրանցից ոչինչ չի հասկանում և կարծես թե մի հազվագյուտ և շինական փիլիսոփայությունով լի գրքի առաջ նստած լինի):

Պարսկերենի եղանակների թվի մասին գոյություն ունեցող տարակարծությունները բխում են.

1. Եղանակների մասին որոշ քերականների ունեցած ոչ ձիշտ անհամապատասխանությունները, թայի եղանակի մասին ոչ ամբողջական պատկերացման արդյունք է պարսկերենում անորոշ դերբայի դիտումը որպես եղանակ (Ի. Բերյուզին, Ե. Բերտլես, Միրզա Զաֆար): Եղանակը Ի. Բերյուզինի մոտ արտահայտում է վիճակ, որը կարող է վերագրվել կամ չվերագրվել որևէ առարկայի: Կարող է ցույց տալ նաև ցանկություն, որպեսզի առարկան արտահայտի որոշ վիճակ: Մինչդեռ, եղանակի քերականական կատեգորիան արտահայտում է ոչ թե առարկայի վիճակ, որը կարող է վերագրվել կամ չվերագրվել նրան, այլ՝ խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ: Ընդ որում, այն կարող է լինել ոչ միայն ցանկություն, այլև հաստատ իրողություն, հրաման, պայման և այլն: Եվ վերջապես, եղանակի, ժամանակի, թվի, դեմքի կատեգորիաները հատուկ են միայն ստորոգում կատարող բայական ձևերին, իսկ պարսկերենում անորոշ դերբայը ստորոգում չի կատարում:

2. Հեղինակների մեծ մասի կողմից միայն կլասիկ լեզուն հաշվի առնելու հետևանքով, երբեմն հաշվի առնելով նոր լեզուն, բայց անտեսելով անցումներն ու արտահայտման նոր ձևերը: Եղանակների բնորոշման ժամանակ նկատի է առնվում միայն մեկ՝ ձևաբանական կողմը, անտեսելով նրա արտահայտած իմաստը, կամ իմաստային էությունը: Այնինչ, եղանակի բնորոշման ժամանակ պետք է նկատի ունենալ այս երկու կողմն էլ, չմոռանալով, որ այս ձևերը ենթակա են փոփոխման: Հին ձևը ժամանակի ընթացքում կարող է ստանալ նոր բովանդակություն և, ընդհակառակը՝ նոր բովանդակությունը կարող է գտնել արտահայտման նոր ձև: Առանձին եղանակը կարող է վերածվել այլ եղանակի և ժամանակաձևերի, ժամանակաձևը՝ նոր եղանակաձևի:

Օրինակ՝ պահլավերենում ըզձական եղանակի ապառնին կազմելու համար ներկայի երկրորդ և երրորդ դեմքերում վերջավորության ու հիմքի միջև ավելանում է ալեֆ, իսկ առաջին դեմքում, դիմորոշ վերջավորությանից հետո՝ mi rāvām, rāvāyi, rāvāt (գնամ, գնաս, գնա):

Հետագայում, կորցնելով երկրորդ և երրորդ դեմքերի ալեֆների և առաջին դեմքի mi-ն, ձևով նույնացել է նեկայի ձևի հետ: (Mezar) rāvām, rāvi, rāvād:

Այստեղ գոյություն ունի մեկ ձև՝ իրարից որոշակիորեն տարբեր երկու բովանդակություններով: Պարզ է, որ այս նույն ձևի մեջ գոյություն ունեցող երկու տարբեր բովանդակությունները վերջ է վերջո պետք է ձգտեին ձևական տեսակետից ևս ինքնուրույն լինել: Տվյալ դեպքում ձևի և բովանդակության պայթյունը երկու ելք կարող էր ունենալ: ա) Հին ձևը աստիճանաբար զրկվելով իր նախկին բովանդակությունից պետք է արտահայտեր նոր բովանդակություն, կամ բ) Նոր բովանդակության համար աստիճանաբար պետք է ստեղծվեր նոր ձև:

Եվ իրոք, հետագայում պարսկերեն այդ երկու առանձին բովանդակությունների համար ստեղծվել է նոր ձև: Ընդհանուր ներկայի ձևը rāvām, զրկվում է իր նախկին (ներկայի) բովանդակությունից դառնալով ըզձականի ձև, որը արդի պարսկերենում ստանում է be: Ներկայի իմաստն արտահայտվում է ներկա շարունակական ձևի օգնությամբ, որը կազմվում է այդ նույն ձևի սկզբին hāmay օժանդակ բառն ավելացնելով rāvām, —գնամ, hāmay rāvām —գնամ եմ), որը նոր լեզվում դարձել է mi:hāmay rāvām > miravam: Արդի պարսկերենը ներկա շարունակականի համար daštān օժանդակ բայի միջոցով ստեղծել է մի նոր ձև darām mixanām. Լեզվում կատարվող նման պրոցեսները պահանջում են երկար ժամանակ, որի ընթացքում ձևի և բովանդակության պայթյունը ստանում է վերջնական լուծում: Այդ է պատճառը, որ չնայած ներկայի նոր ձևի գոյությունը, հին բայաձևը դեռևս չի կորցրել ներկայի նախկին նշանակությունը և երկար ժամանակ նոր ձևի կողքին գործածվել է որպես ընդհանուր ներկա: Արդի պարսկերենում, ինչպես արդեն ասվեց, չնայած որ ներկա շարունակականի համար ձևավորվել է մի նոր ձև, բայց և այնպես, mi-ով ձևը mirāvām, դեռևս արտահայտում է շարունակականի իմաստը: Անսովոր երևույթ է, երբ լեզվի մի եղանակն արտահայտում է լեզվի նախորդ փուլի երկու եղանակների իմաստները: Արդի պարսկերենում երկու եղանակների (ըզձականի և ստորադասականի) տարբերակումը ճիշտ չէ, քանի որ ըզձական եղանակն արտահայտում է հին պարսկերենի ըզձական և ստորադասական եղանակների իմաստները և ունի արտահայտման մեկ ձև:

Քննարկելով Դյուրինգի դպրոցական դաստիարակության վերաբերյալ տեսակետները, Ց. Էնգելսը գրում է. «...մայրենի լեզվի բառամթերքն ու ձևերը հասկանալի են դառնում այն դեպքում, երբ ուսումնասիրվում է դրանց ծագումը, աստիճանական զարգացումը, իսկ այդ

հնարավոր չէ, եթե նկատի չեն առնվում առաջին՝ այդ լեզվի սեփական մեռած ձևերը և, երկրորդ՝ նրա ցեղակից կենդանի և մեռած լեզուները»¹³:

Ուստի, նոր պարսկերենի քերականական որևէ կատեգորիա ուսումնասիրելիս, պետք է նկատի ունենալ պատմական զարգացման այն ընթացքը, որ ունեցել է այդ կատեգորիան: Լեզվի շատ երևույթների լուծումը, եթե դրանք իրոք նոր երևույթ չեն, պետք է փնտրել լեզվի նախորդ փուլում:

«Եղանակի կատեգորիան,— գրում է Վ. Վինոգրադովը,— արտացոլում է խոսողի տեսակետը գործողության և գործող անձի կամ առարկայի հետ ունեցած կապի բնույթի վերաբերյալ: Այն արտահայտում է գործողության և նրա սուբյեկտի միջև եղած իրական կապի գնահատականը խոսողի տեսանկյունից, կամ՝ խոսողի կամքը այդ կապի իրականացման կամ ժխտման մասին: Այսպիսով, եղանակը բայի սխտեմում դտնվող քերականական կատեգորիա է, որը որոշում է գործողության մոդալությունը, այսինքն, ցույց է տալիս գործողության հարաբերությունը իրականության նկատմամբ, որը հաստատվում է խոսողի կողմից»¹⁴:

Եղանակի կատեգորիան տարբեր լեզուներում ունի արտահայտման տարբեր միջոցներ: Այն կարող է արտահայտվել ստորոգյալի ձևաբանական փոփոխություններով, ստորոգյալի վրա դրվող զանազան եղանակավորող բառերով, բառերի դասակարգմամբ և այլն:

Պարսկերենում եղանակի քերականական կատեգորիան արտահայտվում է բայական ձևերով և նրա վրա դրվող զանազան եղանակավորող բառերով:

Mixanām, xandām, mixandām, xande am, xandə budām, xahām xand.

այս բայաձևերն արտահայտում են հաստատ իրողություն, որը համընկնում է իրականությանը: bəxanām բայաձևը արտահայտում է ցանկություն՝ տվյալ գործողությունը կատարելու մասին: āgar bəxanām այնպիսի եղելություն, որի կատարումը կախված է պայմանից և հնարավոր է այդ պայմանի իրականացումից հետո: be xan, այնպիսի գործողություն, որի կատարումը պարտարում է որևէ մեկին: bayād bəxanād արտահայտում է հարկադրանք:

Այսպիսով, պարսկերեն լեզուն ունի հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, հրամայական, պայմանական կամ ենթադրական, հարկադրական:

Н. МЕЛИКСЕТЯН—О наклонениях глагола в современном персидском языке.—

Ни в одном из ныне существующих трудов по грамматике персидского языка категория наклонения не получила исчерпывающегося разъяснения. Мнения исследователей относительно наклонения не совпадают. Разные авторы принимают разное число наклонений. Нет единого мнения и относительно времен, приписываемых тому или иному наклонению. Это проистекает, прежде всего, из неправильной точки зрения ряда грамматистов относительно категории наклонения. Кроме того, большинство авторов принимают во внимание только факты классического языка. Или же они принимают во внимание новый язык, но пренебрегают переходами и новыми формами. При определении категории наклонения эти авторы учитывают только морфологическую сторону, без семантики. Однако, надо учитывать обе стороны, не забывая при этом, что эти формы подлежат изменению. Старая форма со временем может получить новое содержание, новое содержание может найти новую форму выражения. Одно наклонение может перейти в другое наклонение или временные формы, та или иная временная форма может перейти в новую форму наклонения. В современном персидском языке грамматическая категория наклонения выражается глагольными формами и сочетанием различных модальных слов.

¹³ Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, 1936, էջ 120:

¹⁴ В. В. Виноградов, Русский язык (грамматическое учение о слове), М., 1947, с. 581.